ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	-	-	-	-	«Օրենքի պատվար» մեդալ: Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և դարձերեսի կողմից ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի վերևի մասի երկարությունը 26 մմ է, ներքևի մասինը՝ 46 մմ, իսկ հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ վերից վար 50 մմ է:Կախիչը պաստառապատված է 24 մմ

						լայնություն ունեցող մուգ կապույտ գույնի մետաքսյա ժապավենով: Ժապավենի երկու եզրերից անցնում է 2 մմ լայնություն ունեցող մուգ կարմիր շերտագիծ: Սկավառակը պատրաստվում է արծաթափայլ նեյզիլբերից, որի տրամագիծը 32 մմ է, հաստությունը՝ մոտավորապես 3 մմ: Սկավառակի դիմերեսին պատկերված են 2 ապակենտրոն շրջանագծեր: Սկավառակի դիմերեսին՝ փոքր շրջանագծի կենտրոնում, ոսկեփայլ մետաղից պատկերված է սրի և վահանի ռելիեֆային պատկեր: Վահանի երկու կողմերից եզերված են ցորենի հասկերով, իսկ կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության ռեկիեֆային զինանշանը: Զինանշանը էմալապատված է եռագույն էմալով: Վահանի ներքևում պատկերված է ոսկեգույն գիրք՝ ««ՕՐԵՆՔ»» բառով, իսկ աջ ու ձախ կողմերում՝ կշեռքի ոսկեգույն նժարներ: Մեծ շրջանագծի ներքևի մասում ոսկեգույն, ուռուցիկ տառերով գրված է ««ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ»» գրվածքը, որի սկզբում և վերջում

					պատկերված են հավերժության նշաններ: Սկավառակի հակառակ երեսի կենտրոնում երեք տողով, ուռուցիկ տառերով գրվում է ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» բառերը, իսկ ներքևի մասում՝ ««LEX EST LEX»» գրվածքը: Մեդալները պետք է արտադրված լինեն դրոշման ճանապարհով, որը կապահովվի մեդալների բացարձակ միանմանությունը և չափերի նվազագույն շեղումները: Մեդալները դարձերեսի կողմից կրում են արտադրողի անվանանիշը՝ հետագա կեղծումներց խուսափելու համար: Մեդալը պետք է լինի չօգտագործված: Տուփի բնութագիրը՝ Թավշապատ, կրծքանշանը տուփի մեջ տեղակայելու հարթակով, չափերը՝ մոտ 120*130*47:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					